

Հօն՝ ուր թշնամի թշնամույ դիպաւ ,
Անողորմիկ անգութ հարուածով .
Եւ սեպտեմբերի պայծառ առւրտուն՝
Տրոփելով՝ իրենց ցուցուած տեղերուն
Անհեծեալ ձիք վեց հարիւր վազէին ,
Լըսելով զհրահումն գալարփողին :
Թագէ առաւօտն ի կըռուատեղին .
Կապոյտ եւ հանդարտ երկընքին ներքեւ՝
Մահու քընով պաղ խաղաղ եւ լռին
Վեց հարիւր հեծեալք քունեն անարեւ ,
Ձայն փողոյն՝ այլ չի գրգեր հողինին՝
Կըռուի կրակի գէմ գալ այնուհետեւ .
Ոչ այլ ձայն՝ բայց լուկ հրեշտակի փողոյն
Կըրնայ նորէն կեանք տալ հօն ընկելոյն :
Կոտրած դասակարգը զրահազգեստ զընդին ¹ ,
Այն պատերազմիկքն եռանդուն կտրիճ ,
Զինակոչ ձայնով դան եւ հաւաքին .
Հռչակուի համբաւըն սըրտակտրիչ :
Մինչ սեպտեմբերի պայծառ առւրտուն՝
Տրոփելով՝ իրենց ցուցուած տեղերուն
Անհեծեալոր ձիք վեց հարիւր վազեն ,
Երբ գալարփողոյն հնչումը լըսեն :



ՀԱՅԻ ՊԱՏՄԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԵՐԴ

ՆԱՄԱԿ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(Տես երես 188.)

Այսօր ուրիշ մէկ անձի մը հետ ծա-
նօթանանք պիտի , որ վրան մտածելու
արժանի է : Այդ անձը թիթուածնի ու
բնածխի ծնունդ մըն է , այլ ոչ մի և նոյն
օրինակաւ , ինչպէս դու հօրդ ու մօրդ

աղջիկն ես : Ինչ որ կը պատահի այդ աշ-
խարհին մէջ՝ մի և նոյն չէ անոր հետ որ
'ի մեզ կը հանդիպի : Թիթուածինը և
բնածուխը անանկ մէկմէկու հետ կը
խառնուին ու կը միանան , որ մէկ ամ-
բողջ մը կը ձևացնեն , մէկ անձ մը , որ
իրենց ծնունդը կ'ըսուի :

Երկուքն ալ մէկմէկու հետ միանա-
լով անյայտ կ'ըլլան , և այն նոր անձն
որ իրենց միութենէն առաջ կու գայ ,
աճխայիւն քրոշ կը զուրցուի :

Թէ ինչպէս կ'ըլլայ այդ բանը քեզի
չեմ կրնար զուրցել : Կազ մըն է , կամ
թէ լաւագոյն կ'ախորժիս , օդ մըն է .
վասն զի երբ կազ կ'ըսենք , անզդիա-
րէն խօսք մըն է որ կ'արտաբերենք , և
կը նշանակէ օդ : Այդ բառն 'ի պատիւ
երեսաց Բրիտղէյ անզդիացւոյն ընդու-
նեցանք , որ առաջինն եղաւ այլևայլ

¹ Cuirassiers.

տեսակ օգոց կամ կազերու վրայ առաջին հմուտ քննութիւններն ընելու: Ուստի չեմ կրնար քեզի ըսել թէ ուր կըրնաս ածխային թթուն տեսնալ: Երբ մէկն անոր վրայ կը նայի, բան մը չի տեսնար, ինչպէս չկրնար նաեւ պարապ գաւաթի մը մէջ եղած օդը տեսնալ, Բայց կրնամ ըսել քեզի թէ ուր կը գրտնուի, գուցէ դու ալ առանց անունը գիտնալու, գնոյնը կը ճանչնաս:

Կը յիշես ինչպէս հօրդ տօնին օրը սեղանին վերջը շիշ մը Շամբանեայի գինի խմեցին: Կը ծիծաղիս: Կ'երևայ թէ քեզի ալ խմցուցին անկէ, և լեզուդ կծեց, ստոյգ չէ: Խիցը ցատքեցընողը՝ ածխային թթուն էր, որ շիշին մէջ գինիին հետ սխմուած բանտուած էր, և երկաթ թեւն, որ զխիցը կապած կը բռնէր՝ վերցուածին պէս, խիցն ուժով մը նետուեցաւ: Ան որ գաւաթին մէջ շաշելով բարակ սպիտակ փրփուր մը կը հանէր, որուն շառաչը կարծես թէ խմողաց շրթունքները կը հրաւիրէր, գինիին մէջ մնացած ածխային թթուն էր, որ հաղարումէկ պղպղակներով անոր մէջէն կը փախչէր: Լեզուդ կծողը նոյն այդ ածխային թթուն էր, որ ըստ որում թթու կը խայթէ. և անունն ալ թթուութենէն կ'առնու:

Դարձեալ ածխային թթուն է որ ըզգարեցուրը և շիշերու մէջ դրուած նոր գինին կը փրփրացընէ: Նոյն թթուն պատճառաւ է որ կաղային ջուրը և կաղային լեմոնաջուրը կը շաշէ ու կը կծէ. ուստի և ասով կարելի չէ որ քեզի չար մէկ մը երևնայ: Սակայն վրան մի վրստահիր: Այս ալ ուրիշ շատերու կը նմանի, որ ոգելից են, խօսակցութիւնը կը գուարթացնեն և սեղանի ընկերութիւնը զրօսալի կ'ընեն. սակայն իրենց ընկերութիւնը մահադոյժ է այն անձին որ ինքզինքը անոնց կու տայ: Այդ չըքնաղ ածխային թթուն մահացու թոյն մըն է անոր որ իր թոքոց անցըր իրեն առջին ազատ կը թողու:

Գիտես թէ վերջերս քու դայեակդ ինչ սաստիկ գլխու ցաւ զգաց, քու յօժարակամ աղտոտած բազմաթիւ ճեր-

մակեղէնները՝ երկրթէ անցնելով. այդ գլխու ցաւը գիտցիր որ քու պատճառաւ կրեց: Որովհետեւ հարկ եղաւ որ իր երկաթները տաքցընող ածուխներուն վրայ երկայն ատեն գլուխը ծռած կենայ, գլխու ցաւը բռնեց զինքը: Այրած ածուխը, բնածուխ ըսել է, որ օդուն թթուածնին հետ կը միանայ. հիմա այդ բանը գիտես: Այն անիծած ծնունդը հեղեղաբար կրակէն կ'ելլէ, և խեղճ աղջիկը, առողջութեանը վերցուցածէն քիչ մ'աւելի շնչած ըլլալուն համար՝ հարկ եղաւ որ հիւանդ պառկի: Աղէկ գիտէ որ սենեկին դուռը բաց թողուած էր զով օդուն մուտք տալու համար, և նաեւ ծխնելոյդ մըն ալ կար որ ածխային թթուն ելլէ երթայ: Ասոր համար է որ միայն գլխու ցաւով մը ազատեցաւ: Սակայն կրնայ ըլլալ որ անանկ դժբաղդներու վրայ ականջդ խօսք հասնի, որ կեանքէ ալ ձանձրացած ածխի պղտի կրակարանով մը սենեկին կը փակուին, յետ աղետալի զգուշութեամբ մը սենեկին բոլոր ծակերը աղէկ մը գոցելուն: Երբ դրացիները սենեկին լուծեանը վրայ անհանգիստ՝ դուռը կը խորտակեն, դիակէ մը զատ ուրիշ բան չեն գտներ: Հապա այնչափ քաջ գործաւորք, որոնց վրայ օրագիրք շարունակ կը խօսին, որ կոյր զկուրայն երկայն ատենէ 'ի վեր փակուած հորերու մէջ կ'իջնան, և յատակը հասածնուն պէս կը մեռնին. շատ անգամ հոն տեղ երկայն ատենէ 'ի վեր հաւաքուած ածխային թթուն է որ թունաւոր շընչովը զանոնք կայծակնահար կը մեռցընէ:

Թերեւս ուզենաս հարցընել ինծի թէ ինչո՞ւ համար այսպիսի անախորժ պատմութիւններ կը պատմեմ քեզի, և թէ ինչ կ'ուզեմ հետեւընել իմ ածխային թթուով: Ասիկայ կարծածէդ աւելի օգտաշահ է քեզի, ազնիւ դու: Դու և ես, և բոլոր հանդիպած մարդիկդ իսկ, և նաեւ նոյն իսկ կենդանիք, որովհետեւ իրենց մարմնոյն մեքենայն ալ մեքիներն ման է, ամենքս ալ առհասարակ ածխային թթուի պղտի գործատուներ

ենք : Յայտնի բան է . որովհետև մեր բոլոր մարմնոյն մէջ վառած ածխի կրակ մը կայ , հարկ է նաև որ արեան բերած ածխային թթուածինը մեր գործարանաց մէջ գտնուած բնածխին հետ միանալով ծնունդ մը յառաջ գայ . մեր կողորդը ծխնելոյղ կ'ըլլայ այն ատեն , ուսկից այդ ծնունդը կ'ելլէ կ'երթայ : Եթէ ներսը տունը մնար , զմեզ մէկէն կը սպաննէր :

Ահա եղածն այս է : Քանի որ արիւնը սրտէն ելլելով իր շրջանը կ'ընէ , իր բովանդակած թթուածինը կը կորսնցընէ , և անոր փոխանակ՝ կիզումէն առաջ եկած ածխային թթուն կը ժողովէ . աւանակ որ երբ թղբերը կը դառնայ՝ ածխային թթուով լեցուն է : Հոնկէ թթուածնի նոր պաշար մը կը ծծէ , և մի և նոյն գործողութեամբ իր առատ ածխային թթուն դուրս կու տայ , որ կուրծքին շարժմամբքը շնչառութե ծառայող օդուն հետ մէկտեղ մարմնէն դուրս կ'արտաքսուի : Դիւրաւ կ'ըմբռնես որ այդ մարմնոյն մէջ մտած օդը ելածին հետ մի և նոյն չէ , և թէ նոյնը իբր գրասանք երկրորդ անգամ մըն ալ ուզենաս շնչել , նոյն ծառայութիւնը չընել քեզի : Եւ յիշուի , իր թթուածնին մէկ մասը կորուսած է , և ածխային թթուն որ քաղելով հետը առաւ , զինքը նորէն շնչելովդ քեզի կը դարձընէ : Եթէ երրորդ անգամ մըն ալ նորէն 'ի քեզ դառնայ , յոռեգոյն կ'ըլլայ . և քիչ մըն որ այսպէս յամառելով միշտ մի և նոյն օդը շնչես , թթուածինը միշտ նուազելով , և ածխային թթուն հետզհետէ միշտ շատնալով , այդ օդը որ սկզբան քեզի կեանք կու տար , վերջապէս քեզ կը սպաննէ : Եթէ այդ բանը տեսնել կ'ուզես՝ փորձէ զքեզ պզտի արկղի մը մէջ փակել տալու ուր օդը չկարենայ նորոգուիլ , կամ գոնէ քիչ մը նեղ և աղէկ դոց գզրոցի մը մէջ . վերջէն ինծի ըլլալիքը կը զուրցես : Հարկ չկայ անոր մէջը ածուխ այրել : Քու պզտի վառարանիդ մէջ բաւականապէս կ'այրի , և դու ինքզինքդ կրնաս թունաւորել :

Կը տեսնես ինչպէս իմանհաճոյ պատ-

մութիւններս քիչ մը քեզի կը վերաբերին , և զանոնք գիտնալը աղէկ է : Այլ հիմա ըսէ ինծի երբ հարիւր հոգւոյ չափ բազմութիւն մը , որ լաւագոյն կ'ըլլար հարիւր ածխային թթուի գործատուն ըսէի , ամբողջ իրիկուն մը , և երբեմն ալ ամբողջ գիշեր մը , անանկ տեղ մը կը դիպուին կը մնան , ուր հազիւ թէ իրենց երթևեկութեան բաւական միջոց կայ , ըսէ ինծի , այնպիսի տեղ պատշաճաւոր է պզտի օրիորդաց առողջութեւ , որոնց արիւնը այնպիսի շուտ ընթացք ունի , և որոնք թթուածնի այնչափ պէտք ունին . և թէ աղէկ չեն ընել զիրենք անանկ տեղուանք չտանելու : Զբօսալի բան մըն է գիտեմ . սակայն ճշմարիտ զբօսանք անոնք են՝ որոնց համար շատ սուղ հատուցմունք չըլլուի : Ինծի հանդիպած է նոյն իսկ ճրագներուն լուսոյն նուազիլը տեսնալ , և յանկարծակի դեղնիլ այն մարդածախ ժողովատեղեաց մէջ , ինչպէս թէ ուզենային զգացընել այն անխոհմտներուն որ պատուհանները բանալու ժամանակ կը հասած էր :

Եւ այս բանս ինծի դէպք մը կը յիշեցընէ , որ քիչ մնաց կը մոռնայի : Ճշրագները մեզի կը նմանին : Վառելու համար թթուածնի պէտք ունին . և մեզի պէս , իրենք ալ ածխային թթուն մէջ կը մարին : Սակայն մեզի պէս ալ , և նա մանաւանդ մեզմէ ալ աւելի , ածխային թթու կը շինեն , որովհետև աւելի ալ ածուխ կ'այրեն : Կը հետեւի որ այն շողշողուն լոյսը , որուն համար ժողովականք այնչափ զուարթ են ու պարծենկոտ , պարզապէս վտանգ մ'աւելի է : Այդ ճրագներուն իւրաքանչիւրը , որ այնչափ շուրջ առատութեամբ կը գործածուին , վախնալով միայն որ չըլլայ թէ այրելու բաւական չըլլան , քաղցած կոչնական մը կը նմանի , որ ժողովականաց տրուած թթուածնին չնչին բաժնէն անյազաբար կը լափէ : Այդ , հանդիսին ատեն , զուարթ բոցերուն իւրաքանչիւրէն , ածխային թթուն խուռն սաստկութեամբ կը ցայտէ , և պարողաց արտաշնչած թունաւորեալ կազին ա-

հաւոր կոհակները կը շատցնէ: Եւ նա-
յէ, ուրիշ դէպք մըն ալ ըսելու կը մոռ-
նայի: Պարելու հետ են: Տեսանք վեր-
ջին անգամուն թէ պարը որչափի կը
նստի: Կրակը աւելի երազաբար բռնկ-
ցնելու է, այսինքն շատ աւելի թը-
թուածին սպառելու է միանգամայն, և
կրկնապատկել, եռապատկել ածխային
թթուի գործատան գործունէութիւնը,
և այդ ճշդիւ այն ատեն՝ որ շատ հարկա-
ւոր էր այդ գործունէութիւնը կարելի
եղածին չափ ծանրացնել: Այս գոր-
ծէս ետքը եթէ երկրորդ օրը երեսները
գունաթափ կ'ըլլան, զարմանալու չէ:
Ինծի զարմանք տուողն այս է թէ բոլոր
այդ մարդիկ, յետ իրենց խեղճ թղթոց
այնպիսի ընծայ մը տալուն, ինչպէս
հիւանդ անկողին պառկելու չեն բռնա-
դատուած: Այլ եթէ ևս ոտքի վրայ կե-
ցած կը շրջին, հաւտա՛ որ լաւագոյն չեն
գտնուիր. և այդ բանը միշտ կը հանդի-
պի, մանաւանդ եթէ ստէպ նոյն գոր-
ծոյն կրկնութեանը դառնան:

Հիմա ըսէ ինծի թէ ինչ կը մտածես
առջի ըսածիս վրայ, թէ աշխատանքին
պարը միւսէն շատ աւելի կ'աժէ:

Նոյն բանը կրնամ ըսել նաև տեսա-
րանաց սրահներուն նկատմամբ, այն
զբօսանաց տեղիք, որ կարծես թէ դիտ-
մամբ հնարուած են արիւնը աղքատցը-
նելու, և այն երջանիկ մահկանացուաց
առողջութիւնը ապականելու, որոնք ա-
մեն իրիկուն թատր գալու կը փութան
որպէս զի իրենց թղթերը ածխային թը-
թուով լեցնելու իրաւունքը գնեն, չու-
զելով ուրիշ բանի վրայ խօսիլ: Դիւ-
րաւ կ'ըմբռնես թէ այդ տեղուանք քու
պզտի թղթերդ ունեցողներուն պատշաճ
չեն, և այդ բանը գիտնալով պիտոր
չգժկամակիս, եթէ քեզ անանկ տե-
ղուանք չուզենան տանիլ: Մեծ մարդիկ
անկէ անջնաս կ'ելլեն, վասն զի մարդ-
կային մեքենայն անանկ զարմանալի
առաձգականութիւն մը կը բովանդակէ
յինքեան, մինչ այնու, ձիւքով կարող
կ'ըլլայ անջնաս ելլել այն ամեն վտան-
գաւոր դիրքերէն, որոնց մէջ իր տէրե-
րը զինքը անզգուշաբար կը ձգեն: Սա-

կայն այս բանիս համար ալ լաւ է որ
այն մեքենայն բոլորովին ձեռացած ըլ-
լայ. վասն զի եթէ շատ կանուխ չար-
չարուիլ սկսի, վտանգի մէջ կ'իյնայ բո-
լորովին եղծանելու: Այդ բանը նայէ
զուրցես քու դպրատուն գացող եղբօրդ
ալ, որ հիմակունէ ինչպէս մեծ մարդ
մը ըլլար, սիկսառին վարժութիւնը կը
փնտռէ: Եթէ իր թղթերը խօսելու կա-
րողութիւնը ունենային, անշուշտ իրեն
կը զուրցէին որ այն հասակին մէջ այդ-
պիսի բան մը իրենց համար շատ խիստ
է, և զոնէ սպասելու է որ իրենց հար-
ցաքննութեան ժամանակը անցնի:

Սակայն զգուշանա՛նք չըլլայ թէ այդ
արգոյ անձին հետ աւրուինք, ունայն
տեղ իր պարտիզին մէջ քարեր նետե-
լով, ուր ընելու գործ մը չունին: Քեզի
նկատմամբ, սիրելի օրիորդ, իմ այս
օրուան դասէս, զորես դայեկի մը պատ-
մութենէն շատ աւելի ահաւոր կը գըտ-
նեմ, որովհետև ամենօրեայ դէպքերու
վրայ հիմնեալ է, ահա այս բարոյակա-
նը քաղելու ես. զուարճութիւններդ
նայէ բաց օդու մէջ փնտռես: Ամառ ա-
տեն այն ժամուն որ կանթեղը կը վա-
ռեն, մօրդ աղնուութեամբ մը գիշեր
բարի զուրցէ ու գնա պառկէ: Չմեռ
ատեն խուցդ քաշուելէդ յառաջ՝ մի
սպասեր որ մեծ մարդոց սենեակը շատ
ածխային թթուով լցուի. այլ իբր խո-
հական աղջիկ խնայէ այդ խեղճ ա-
րեանդ որ անանկ գործունեայ ու յար-
գելի ծառայ մըն է: Գիտցիր որ եթէ
զինքը շատ նեղացնես, բոլոր կենացդ
մէջ քեզի դէմ պիտոր տրտնջէ: Կա-
րելի չէ ինչպէս դայեակը կը փոխեն,
անանկ ալ այդ ծառան փոխել...:

Կը շարունակուի:

ԱԼԹՈՆԱՅԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻՆ ՄԵԶ

ՎԱՐՁԱՏՐՈՒԱԾ ԵՌԵՆԵՐԸ

(Տես էրես 216-217)

Գերմանիոյ մէջ մասնաւոր խնամք մը
կը տեսնուի վերջի տարիներս՝ շանց ցե-